**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ**
**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 23.03. 2022թ.
ժամը 11³⁵

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացումն իրականացվել է 21-ը մարտի 2022թ. ժամը 11⁰⁰-ին ՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքները:

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲՎ պետի տեղակալ, գնդապետ Ա. Գալստյանը,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲՎ ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյանը,
ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
**Գնումները համակարգող**
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Լ. Թազայանը:

**«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի (ԲՄ) գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ բաց մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Ածխի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1. | «Երվադա» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով** բաց մրցույթի **էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝** բաց մրցույթի **հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ <u>հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.</u>**

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:

*Ի գիտություն. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերում բացակայում էր հայտի ապահովումը, սակայն մասնակցի կողմից հայտի ապահովման բնօրինակը /բանկային երաշխիքի ձևով/, գնահատող հանձնաժողովին ներկայացվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն' ուղեկցող գրությամբ, ուստի ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի տվյալները գնահատել բավարար, սույն ընթացակարգի հրավերի պահանջներին (համապատասխան):*

*Ընդունվել է որոշում' կողմ' 3, դեմ' 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Չ/Հ | Գնան առարկայի անվանումը | Չ/մ | Քանակ | Նախահաշվային գին ՀՀ դրամ | Բաց մրցույթին մասնակցող ընկերության | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/հ | Անվանումը | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 8 | Ածուխ | տոննա | 2400 | **288 000 000** | 1 | «Երվադա» ՍՊԸ | 240 000 000 | 48 000 000 | 288 000 000 |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների' մասնակիցն ԱԱՀ վճարող է:

3.4 Քանի որ «Ածուխի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը 23.03.2022թ.-ին որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և գների նվազեցման նպատակով 28.03.2022թ. ժամը 12:15-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ' բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ («Երվադա» ԱՊԸ-ի), իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակցին էլեկտրոնային ձևով ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 28.03.2022թ. ժամը 12:15-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին նախատեսված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցը չէր ներկայացել, ուստի նրա կողմից ներկայացված գնային առաջարկը մնաց անփոփոխ:

*Ընդունվել է որոշում' կողմ' 3, դեմ' 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա' «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով** բաց մրցույթի **հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Լ. Թազայան)

4.1 28.03.2022թ.-ին' հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին բավարար գնահատված և տվյալ չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակից' «Երվադա» ՍՊԸ–ին հայտարարել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել' հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն' անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից:

*Ընդունվել է որոշում' կողմ' 3, դեմ' 0:*

**5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.**

(Լ. Թազայան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-22-10/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Ա. Գալստյան |
| **Գնահատող** | Վ. Ղազարյան |
| **Գնահատող** | Ս. Սարգսյան |
| **Գնումները համակարգող** | Լ. Թազայան |